

**Բախշինյան Ք., Բիանջյան Հ., Ղազարյան Լ., Մելիքյան  
Գ., Պարսկերենի դասագիրք, Երևան, ԻԿԿ հրատ., 2011,  
288 էջ**

Իրանագիտությունն այսօր գուտ ակադեմիական հարցերի կողքին հանձնառու է դարձել լուծելու գործնական, ոչ հազվադեպ՝ պետականորեն և հասարակայնորեն նշանակալի խնդիրներ: Այս պարագայում հատուկ կարևորություն է ստանում որակյալ և լեզվին տիրապետող մասնագետների պատրաստման գործընթացը, որը հիմնորեն իրականացվում է միջազգայնորեն ճանաչված ԵՊՀ իրանագիտության ամբիոնում:

Հայաստանում պարսից լեզուն դասավանդվում է Երևանի պետական համալսարանի հիմնադրումից ի վեր, որի ակունքներում կանգնած է եղել հայ խոշոր լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը: Տարբեր տարիներին համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հրատարակամբ պարսկերենով լույս են տեսել բառարաններ, քրեստոմատիաներ, ընթերցարաններ: Հիշատակության արժանի է 1980 թվականին պրոֆեսոր Գ. Նալբանդյանի կազմած «Պարսից լեզվի քերականությունը»: Սակայն այսօր, իրանագիտության բուռն զարգացման պայմաններում, խորապես զգացվում էր ժամանակակից մեթոդական սկզբունքներով կազմված պարսկերենի համապարփակ դասագրքի պահանջը: Հենց այդ բացը լրացնելուն է ուղղված ԵՊՀ իրանագիտության ամբիոնի երկար տարիների դասավանդման փորձ ունեցող առաջատար մի խումբ դասախոսների բազմամյա ջանքերի շնորհիվ 2011 թվականին լույս ընծայված «Պարսկերենի դասագիրքը»՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ասատրյանի խմբագրությամբ: Դասագրքում մի կողմից հաշվի են առնված պարսից լեզվի քերականական, բառապաշարային, մյուս կողմից՝ դասավանդման մեթոդին առնչվող նորագույն ձեռքբերումները: Սույն ուսումնական

ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ Կրթության ու գիտության նախարարության կողմից՝ որպես բուհական դասագիրք:

Դասագիրքը բավականին ընդգրկուն է, այն ներառում է պարսից լեզվի քերականության ողջ հնչյունաբանական և ձևաբանական կազմը, ինչպես նաև դիտարկված են շարահյուսության հիմնախնդիրները: Քերականական կարգերը ներկայացված են հայերենի քերականության հետ քննական-համեմատական համատեքստում, նշված են երկու լեզուներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները: Այս առումով առավել բարձրանում է ուսումնագրքի արժեքը, քանզի ուսանողը կարողանում է ամրապնդել իր նորընծա գիտելիքները համեմատական դիտանկյունից, որը և նպաստում է պարսկերենի ընկալմանը, տրամաբանված ըմբռնմանը: Քերականական կարգերի ուսուցումն ամրակայվում է համապատասխան վարժություններով:

Դասագիրքն ամբողջական չէր լինի, եթե այն հազեցած չլիներ ժամանակակից պարսկերենի բնօրինակ տեքստերով: Այս համատեքստում հարկ է նշել, որ ներառված տեքստերը բովանդակային պլանում պարունակում են ճանաչողական և տեղեկատվական գիտելիքներ. առնչվում են լեզվական, երկրագիտական, ազգագրական, պատմաաշխարհագրական, կրոնական, մշակութային-քաղաքակրթական ոլորտներին: Պարսից լեզվի պերճախոսությանն ուսանողը ծանոթանում է պարսից դասական և ժամանակակից պոեզիայի անգուգական նմուշների, ինչպես նաև ասացվածքների ու ասույթների միջոցով:

Նշենք նաև, որ դասագիրքը բաղկացած է 45 դասից, ամեն մի դաս՝ իր համապատասխան ենթաբաժիններից՝ պարամունքներից: Յուրաքանչյուր դասի և պարամունքի նոր բառերն իրենց թարգմանություններով տրվում են տվյալ դասի սկզբում:

Դասագրքի վերջում զետեղված չորս հավելվածները հարստացնում ու ամբողջացնում են պարսից լեզվի նորմա-

տիվ քերականության սկզբունքներով կազմված դասագիրքը և համապատասխանաբար ներառում են՝ ա) արաբական բառաձանցման կաղապարները պարսկերենում, որը շատ կարևոր կարգ է լեզվի բառակազմության տեսանկյունից, բ) պարսից լեզվով բնագիր տեքստեր՝ լեզվի առավել զարգացած մակարդակի համար, գ) պարսկերենի անկանոն բայերի ներկայի հիմքերի ցանկը և դ) քերականական տերմինների բառարանը:

Ամփոփելով՝ նշենք, որ կատարվել է հիրավի ծավալային և բովանդակային մեծ ու տքնաջան աշխատանք և «Պարսկերենի դասագիրքը» կարևոր ներդրում է հայ իրանագիտության մեջ:

*Թադևոս Չարչյան*

*Բ.Գ.Թ.*